ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -307-2023

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» «07» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Շ. Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի 214-Ն որոշումը՝ որոշման «1168. Արվեստների ծրագրի» «11013. Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանական միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Հայկական Կինոդար» ֆիլմերի ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և

իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է **31143.1** հազար (երեսունմեկ միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. հոկտեմբերի 21-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

4.3. Սույն պայմանագրի գործողության ժամկետը տարածվում է հուլիսի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյան (ստորագրություն) Կ.Տ.	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ Երևան, Տերյան 3ա ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271 Տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«14» «06» 2023 թ.
N ՄՇԴ-307-2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր
«Հայկական կինոդար» ֆիլմերի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ. ք. Երևան, Տերյան 3/ա
3	Ծրագրի անվանում	«Հայկական Կինոդար» ֆիլմերի ծրագիր
3.1	Բովանդակություն	«Հայկական Կինոդար» ֆիլմերի ծրագիրը կմեկնարկի 2023թ. հուլիսին և կիրականացվի մինչև հոկտեմբեր ամիսը ներառյալ: Ծրագրի ընթացքում, մարզերում կցուցադրվեն շուրջ հարյուր հայկական լիամետրաժ և կարճամետրաժ, դասական և ժամանակակից ֆիլմեր (անիմացիոն վավերագրական և խաղարկային), որոնց թվում կլինեն նաև հայկական կինոժառանգության վերականգված ֆիլմեր: Ծրագրի շրջանակներում թիրախավորվելու են հատկապես այն մարզերն ու մարզկենտրոնները, որոնք զրկված են կինոֆիկացիայից և չունեն կինոդիտումներ անցկացնելու հնարավորություններ: Ծրագիրը կիրականացվի Հանրապետության 10 մարզերում՝ դպրոցներում, մշակութային կենտրոնների դահլիճներում, բացօթյա հրապարակներում: Ցուցադրություններին կհրավիրվեն կինոգետներ և մշակութային գործիչներ, ինչպես նաև ստեղծագործական կազմից ներկայացուցիչներ, որոնք կներկայացնեն ցուցադրվող ֆիլմերը: Ենթագրեր չունեցող հայալեզու ֆիլմերի համար կպատրաստվեն անգլերեն ենթագրեր՝ օտարալեզու հանդիսատեսներին գրավելու նպատակով, իսկ ռուսալեզու հայկական ֆիլմերը կունենան հայերեն ենթագրեր: Տվյալ աշխատանքը կիրականցվի ծրագրի ողջ ընթացքում՝ ըստ ցուցադրությունների առաջնահերթության:
3.2	Նպատակ	Ծրագրի նպատակն է հայկական կինոժառանգության և ժամանակակից (անիմացիոն վավերագրական և խաղարկային) ֆիլմերի հանրայնացումը՝ կինոցուցադրությունների բնօրինակ ձևաչափով՝ մեծ էկրանին, ինչը կխթանի կինոմշակույթի հաստատուն զարգացումը Երևանից դուրս, ինչպես նաև մեծապես կնպաստի հայ կինոյի քիչ հայտնի դասականների տարածմանը հասարակության ավելի լայն, ինչպես նաև երիտասարդ սերնդի շրջանակներում:
3.3	Անցկացման	Հուլիսից – Հոկտեմբեր 2023թ.

	ժամկետ	
3.4	Անցկացման վայր	Հայաստանի Հանրապետության մարզեր (Արմավիր, Լոռի, Տավուշ, Սյունիք, Շիրակ, Գեղարքունիք, Արարատ, Արագածոտն, Վայոց Ձոր, Կոտայք):
3.5	Ակնկալվող արդյունքներ	Միջոցառման իրականացման արդյունքում կունենանք կինոժառանգության և ժամանակակից ֆիլմերի (անիմացիոն վավերագրական և խաղարկային) լայնամասշտաբ հանրայնացում՝ ներգրավելով հասարակության տարբեր շերտերի, որտեղ յուրաքանչյուրը կկարողանա գտնել իրեն հոգեհարազատ անիմացիոն վավերագրական և խաղարկային ֆիլմերը: Ծրագրի կարևոր արդյունքներից մեկը կլինի նաև ֆիլմերի ենթագրումը անգլերեն լեզվով, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանում գտնվող օտարերկրյա այցելուներին ծանոթանալու հայ կինոյի դասականների և ժամանակակից ֆիլմերի հետ, ինչպես նաև առարկայական նշանակություն կունենա հայկական կինոարվեստի միջազգայնացման ծրագրերի և տարբեր ցանցային հարթակներից հեռարձակելու համար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Մարզերի քանակ՝ 10 մարզ, 25 քաղաք և 13 համայնք Ցուցադրվող ֆիլմերի քանակ՝ 100 Հանդիսատեսի քանակ՝ 15000 Մասնակիցների քանակ՝ 50 Թվային մշակման ենթակա ֆիլմերի քանակ՝ 18 Մոնտաժային թերթեր՝ 20 ֆիլմի համար Ենթագրման ենթակա ֆիլմերի քանակ՝ 40

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«18» «07» 2023 թ.
N ՄՇԴ-307-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Հայկական Կինոդար» ֆիլմերի ծրագրի ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)*, այդ թվում՝**				**1 376,6**
1.2	համակարգող	մարդ	1	200 000	200,0
1.3	կազմակերպիչ	ամիս	3	110 000	330,0
1.4	մեխանիկ	օր	48	12 000	576,0
1.5	բանվոր	օր	41	6 600	270,6
2.	***Կազմակերպական ծառայություններ, այդ թվում՝***				**17 000,0**
2.1	ֆիլմերի թվային մշակում՝ 18 ֆիլմ x 150 000 դրամ = 2 700 000 դրամ	հատ	1	2 700 000	2 700,0
2.2	մոնտաժային թերթերի ստեղծում՝ 20 ֆիլմ x 50 000 դրամ = 1 000 000 դրամ	հատ	1	1 000 000	1 000,0
2.3	ֆիլմերի թարգմանություն անգլերեն, հայերեն ՝ 40 ֆիլմ x 30 էջ (միջին) x 6 000 դրամ = 7 200 000 դրամ	հատ	1	7 200 000	7 200,0
2.4	ենթագրերի հավաքող՝ 40 ֆիլմ x 30 էջ (միջին) x 5 000 դրամ = 6 000 000 դրամ	հատ	1	6 000 000	6 000,0
2.5	Ազդագիր (A 2 ֆորմատ)՝ 50 հատ x 2 000 դրամ = 100 000 դրամ	հատ	1	100 000	100,0
3	***Մարզերում ցուցադրության ծախսեր, այդ թվում՝***				***7 576,0***
3.1	***Արմավիրի մարզ՝, այդ թվում՝***				***380,0***
3.1.1	մալուխների ռետինե ծածկիչ (1 մետրանոց) ծառ.՝ 20 հատ x 2 օր x 1 500 դրամ = 60 000 դրամ	հատ	1	60 000	60,0
3.1.2	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 3 օր x 15 000 դրամ = 45 000 դրամ	հատ	1	45 000	45,0
3.1.3	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 5 000 դրամ = 25 000 դրամ	հատ	1	25 000	25,0
3.1.4	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն, այդ թվում՝***				***250,0***
3.1.4.1	մարդատար մեքենա՝ Երևան-Արմավիր, Մայիսյան, Խանջյան, Սարդարապատ, Հացիկ- Երևան 5 երթ x 20 000 դրամ (միջին գին) = 100000 դրամ	հատ	1	100 000	100,0
3.1.4.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Արմավիր, Մայիսյան, Խանջյան, Սարդարապատ, Հացիկ- Երևան 5 երթ x 30 000 դրամ (միջին գին) = 150 000 դրամ	հատ	1	150 000	150,0
3.2	***Լոռու մարզ՝, այդ թվում՝***				**1 255,0**
3.2.1	օրապահիկ՝ 4 մարդ x 7 օր	մարդ/օր	28	5 000	140,0
3.2.2	գիշերավարձ՝ 4 մարդ x 6 օր	մարդ/օր	24	15 000	360,0
3.2.3	օրապահիկ՝ 1 մարդ x 6 օր	մարդ/օր	6	5 000	30,0
3.2.4	գիշերավարձ՝ 1 մարդ x 5 օր	մարդ/օր	5	15 000	75,0
3.2.5	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 15 000 դրամ = 75 000 դրամ	հատ	1	75 000	75,0
3.2.6	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 5 000 դրամ = 25 000 դրամ	հատ	1	25 000	25,0
3.2.7	**Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝**				***550,0***

3.2.7.1	մարդատար մեքենա՝ Երևան-Ալավերդի, Շնող, Հաղպատ, Ճոճկան, Ստեփանավան, ք. Վանաձոր-Երևան՝ 7 օր x 40 000 դրամ (միջին գին) = 280 000 դրամ	հատ	1	280 000	280,0
3.2.7.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Ալավերդի, Շնող, Հաղպատ, Ճոճկան, Ստեփանավան-Երևան՝ 6 օր x 45 000 դրամ (միջին գին) = 270 000 դրամ	հատ	1	270 000	270,0
3.3	***Տավուշի մարզ՝***				**1 284,0**
3.3.1	օրապահիկ՝ 5 մարդ x 7 օր	մարդ/օր	35	5 000	175,0
3.3.2	գիշերավարձ՝ 5 մարդ x 6 օր	մարդ/օր	30	15 000	450,0
3.3.3	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 6 օր x 15 000 դրամ = 90 000 դրամ	հատ	1	90 000	90,0
3.3.4	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 6 օր x 5 000 դրամ = 30 000 դրամ	հատ	1	30 000	30,0
3.3.5	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝***				***539,0***
3.3.5.1	մարդատար մեքենա՝ Երևան-Իջևան, Բերդ, Նոյեմբերյան, գ. Հաղարծին, Դիլիջան (2 օր)-Երևան՝ 7 օր x 37 000 դրամ (միջին գին) = 259 000 դրամ	հատ	1	259 000	259,0
3.3.5.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Իջևան-Բերդ-Նոյեմբերյան-գ. Հաղարծին-Դիլիջան (2 օր)-Երևան՝ 7 օր x 40 000 դրամ (միջին գին) = 280 000 դրամ	հատ	1	280 000	280,0
3.4	***Սյունիքի մարզ՝***				**1 384,0**
3.4.1.	օրապահիկ՝ 4 մարդ x 7 օր	մարդ/օր	28	5 000	140,0
3.4.2.	գիշերավարձ՝ 4 մարդ x 6 օր	մարդ/օր	24	17 000	408,0
3.4.3.	օրապահիկ՝ 1 մարդ x 4 օր	մարդ/օր	4	5 000	20,0
3.4.4.	գիշերավարձ՝ 1 մարդ x 3 օր	մարդ/օր	3	17 000	51,0
3.4.5.	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 3 օր x 15 000 դրամ = 45 000 դրամ	հատ	1	45 000	45,0
3.4.6.	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 3 օր x 5 000 դրամ = 15 000 դրամ	հատ	1	15 000	15,0
3.4.7.	Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման սակագին (Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն՝ 1 օր, մասնակի)	հատ	1	150 000	150,0
3.4.8.	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝***				***555,0***
3.4.8.1.	մարդատար մեքենա՝ Երևան-Կապան,Սիսիան (2 օր), Գորիս, Քաջարան, Մեղրի-Երևան՝ 7 օր x 49 000 դրամ (միջին գին) = 343 000 դրամ	հատ	1	343 000	343,0
3.4.8.2.	բեռնատար մեքենա՝ Երևան-Սիսիան (2 օր), Գորիս՝ 4 օր x 53 000 դրամ (միջին գին) = 212 000 դրամ	հատ	1	212 000	212,0
3.5.	***Շիրակի մարզ՝***				***526,0***
3.5.1.	օրապահիկ՝ 4 մարդ x 5 օր	մարդ/օր	20	5 000	100,0
3.5.2	գիշերավարձ՝ 4 մարդ x 4 օր	մարդ/օր	16	10 000	160,0
3.5.3.	օրապահիկ՝ 1 մարդ x 2 օր	մարդ/օր	2	5 000	10,0
3.5.4	գիշերավարձ՝ 1 մարդ x 1 օր	մարդ/օր	1	10 000	10,0
3.5.5.	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 2 օր x 15 000 դրամ = 30 000 դրամ	հատ	1	30 000	30,0
3.5.6.	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 2 օր x 5 000 դրամ = 10 000 դրամ	հատ	1	10 000	10,0
3.5.7.	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝***				***206,0***

3.5.7.1	մարդատար մեքենա՝ Երևան-Գյումրի (3 օր), Արթիկ-Երևան՝ 5 օր x 29 000 դրամ (միջին գին) = 145 000 դրամ	հատ	1	145 000	145,0
3.5.7.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Գյումրի, Արթիկ-Երևան՝ 2 օր x 30 500 դրամ (միջին գին) = 61 000 դրամ	հատ	1	61 000	61,0
3.6	***Գեղարքունիքի մարզ՝***				**1 005,0**
3.6.1	օրապահիկ՝ 5 մարդ x 6 օր	մարդ/օր	30	5 000	150,0
3.6.2	գիշերավարձ՝ 5 մարդ x 5 օր	մարդ/օր	25	17 000	425,0
3.6.3	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 15 000 դրամ = 75 000 դրամ	հատ	1	75 000	75,0
3.6.4	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 5 000 դրամ = 25 000 դրամ	հատ	1	25 000	25,0
3.6.5	**Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝**				**330,0**
3.6.5.1	մարդատար մեքենա՝ Երևան-Սևան, Գավառ, Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի -Երևան՝ 6 օր x 25 000 դրամ (միջին գին) = 150 000 դրամ	հատ	1	150 000	150,0
3.6.5.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Սևան, Գավառ, Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի -Երևան՝ 6 օր x 30 000 դրամ (միջին գին) =180 000 դրամ	հատ	1	180 000	180,0
3.7	***Արարատի մարզ՝***				***315,0***
3.7.1	օրապահիկ՝ 5 մարդ x 3 օր	մարդ/օր	15	5 000	75,0
3.7.2	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 15 000 դրամ = 75 000 դրամ	հատ	1	75 000	75,0
3.7.3	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 5 օր x 5 000 դրամ = 15 000 դրամ	հատ	1	25 000	25,0
3.7.4	**Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝**				**140,0**
3.7.4.1	մարդատար մեքենա՝ Երևան-Արտաշատ, Արարատ, Ավշար, Վեդի, Մասիս -Երևան՝ 5 օր x 12 000 դրամ (միջին գին) = 60 000 դրամ	հատ	1	60 000	60,0
3.7.4.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Արտաշատ, Արարատ, Ավշար, Վեդի, Մասիս -Երևան՝ 5 օր x 16 000 դրամ (միջին գին) = 80 000 դրամ	հատ	1	80 000	80,0
3.8	***Արագածոտնի մարզ՝***				**242,0**
3.8.1	օրապահիկ՝ 5 մարդ x 2 օր	մարդ/օր	10	5 000	50,0
3.8.2	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 4 օր x 15 000 դրամ = 60 000 դրամ	հատ	1	60 000	60,0
3.8.3	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 4 օր x 5 000 դրամ = 20 000 դրամ	հատ	1	20 000	20,0
3.8.4	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝***				***112,0***
3.8.4.1	մարդատար մեքենա՝ Երևան-Աշտարակ, Օշական, Ուջան, Թալին -Երևան՝ 4 օր x 12 000 դրամ (միջին գին) =48 000 դրամ	հատ	1	48 000	48,0
3.8.4.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Աշտարակ, Օշական, Ուջան, Թալին -Երևան՝ 4 օր x 16 000 դրամ (միջին գին) =64 000 դրամ	հատ	1	64 000	64,0
3.9	***Վայոց Ձորի մարզ՝***				**820,0**
3.9.1	օրապահիկ՝ 5 մարդ x 5 օր	մարդ/օր	25	5 000	125,0
3.9.2	գիշերավարձ՝ 5 մարդ x 4 օր	մարդ/օր	20	12 500	250,0
3.9.3	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 4 օր x 15 000 դրամ = 60 000 դրամ	հատ	1	60 000	60,0

3.9.4	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 4 օր x 5 000 դրամ = 20 000 դրամ	հատ	1	20 000	20,0
3.9.5	***Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառայություն՝***				***365,0***
3.9.5.1	մարդատար մեքենա՝ Երևան-Վայք,Գնդեվազ, Վերնաշեն, Գետափ -Երևան՝ 5 օր x 33 000 դրամ (միջին գին) =165 000 դրամ	հատ	1	165 000	165,0
3.9.5.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Վայք,Գնդեվազ, Վերնաշեն, Գետափ -Երևան՝ 5 օր x 40 000 դրամ (միջին գին) =200 000 դրամ	հատ	1	200 000	200,0
3.10	**Կոտայքի մարզ՝**				365,0
3.10.1	օրապահիկ՝ 5 մարդ x 1 օր	մարդ/օր	5	5 000	25,0
3.10.2	էկրանի վարձակալություն (ծառ.)՝ 2 օր x 15 000 դրամ = 30 000 դրամ	հատ	1	30 000	30,0
3.10.3	բարձրախոսի վարձակալություն (ծառ.)՝ 4 օր x 5 000 դրամ = 20 000 դրամ	հատ	1	20 000	20,0
3.10.4	**Մարդատար և բեռնատար մեքենայի վարձակալության ծառաություն՝**				***130,0***
3.10.4.1	մարդատար մեքենա՝ Երևան-Հրազդան,Չարենցավան, Աբովյան,Գեղաշեն-Երևան՝ 4 երթ x 20 000 դրամ (միջին գին) =80000 դրամ	հատ	1	80 000	80,0
3.10.4.2	տեխնիկա տեղափոխող մեքենա՝ Երևան-Չարենցավան, Աբովյան, -Երևան՝ 2 երթ x 25 000 դրամ (միջին գին) =50000 դրամ	հատ	1	50 000	50,0
3.10.4.3	Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման սակագին (Չարենցավանի Ա. Խաչատրյանի անվ. Երաժշտական դպրոց, 1 օր)	հատ	1	80 000	80,0
3.10.4.4	Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման սակագին (Աբովյանի Հ. ՍահՀակյանի անվ. Երաժշտական դպրոց, 1 օր)	հատ	1	80 000	80,0
	ԸՆԴԱՄԵՆԸ,				**25 952,6**
	ԱԱՀ**				**5 190,5**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**31 143,1**
	*** Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**				
	**** *ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե***				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011042638 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային կինոկենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«14» « 07» 2023 թ.
N ՄՇԴ-307-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
« 14 » «07» 2023 թ.
N ՄՇԴ-307 -2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝